

Կարծիք

Սյուզաննա Գագիկի Թաղևոսյանի «Եղանակավորման իմաստաշարահյուսական միջոցները ժամանակակից ֆրանսիական լրագրային խոսույթում» թեմայով Ժ.02.07. «Ռոմանագերմանական լեզուներ» մասնագիտությամբ բանասիրական գիտությունների թեկնածուի աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ

Վերջին տասնամյակներում խոսքաստեղծման և խոսքընկալման տեսություններում առանցքային դեր են խաղում եղանակավորման և դրա հետ փոխկապակցված հասկացությունների (հաղորդակցական դիտավորություն, վերաբերություն և այլն) քննությունը՝ խոսքը դիտարկելով որպես ազգամշակութային պայմանավորվածություն ունեցող վարքագծի համակարգ: Այս խնդրի քննության մեջ ելակետային է Շ. Բալլի այն տեսակետը, ըստ որի՝ յուրաքանչյուր ասություն բաղկացած է դիկտումից և մոդուսից: Արդի լեզվաբանական ուսումնասիրությունների հարացույցում այս խնդիրն առանձնանում է քննության բազմահայեցակերպային մոտեցումներով և իր արժանի տեղն է գրավում մեդիադիսկուրսին նվիրված աշխատություններում: Մեդիատեքստը, որպես բազմաշերտ հիերարխիկ լեզվական երևույթ, որի իմաստային կառուցվածքում ներդաշնակորեն միահյուսվում են տեղեկատվական անփոփոխակն ու մոդուսային բաղադրիչը, այսօր դարձել է բուռն քննարկումների առարկա: Ահա այս խնդրին է նվիրված Սյուզաննա Թաղևոսյանի «Եղանակավորման իմաստաշարահյուսական միջոցները ժամանակակից ֆրանսիական լրագրային խոսույթում» թեմայով ատենախոսությունը, որը բնութագրվում է իր բազմապլանային բնույթով և հայ ֆրանսագիտության մեջ դեռևս չի դարձել հատուկ քննության առարկա:

Ս. Թաղևոսյանի ատենախոսությունն արժևորելու նպատակով ստորև ներկայացնենք այդ աշխատանքի հայեցակարգային և մեթոդաբանական հիմնական խնդիրները:

1. Ատենախոսության թեման արդիական է, քանի որ տվյալ ուսումնասիրության առարկան հանրային տիրույթում իր կարևոր տեղն ու դերն ունեցող լրագրային խոսույթի արտակա և ներակա եղանակավորման հիմնական իմաստաշարահյուսական միջոցների քննությունն է, որն, ինչպես նշել ենք, այսօր գտնվում է արդի լեզվաբանության քննության առանցքում: Լրագրային ոլորտում քարոզչական գործունեությունն ունի սուբյեկտիվ-գնահատողական ուղղվածություն, ընդ որում, արդի մարդակենտրոն ուսումնասիրությունների հարացույցում «ցանկացած ասույթ կառուցվում և իրացվում է խոսողի, այն է՝ եղանակավորող սուբյեկտի կողմից» (էջ 109)՝ ընդգրկելով հաղորդակցության գործընթացի գործաբանական և ճանաչողական բաղադրիչները: Չնայած այս խնդրի քննության շուրջ գոյություն ունեցող տարբեր մոտեցումներին՝ ատենախոսը, հստակ մեթոդաբանական հենքի վրա, որտեղ ներդաշնակորեն համակցվում են

քննության տարբեր մեթոդներ, հաջողությամբ հաղթահարել է իր առջև դրված խնդիրները:

2. Աշխատանքի կարևոր արժանիքներից է նրա կուռ և տրամաբանական կառուցվածքը, հստակորեն համակարգված բնույթը: Ներածության մեջ հստակ կերպով ձևակերպված են աշխատանքի արդիականությունը, օբյեկտն ու առարկան, նպատակն ու հիմնական խնդիրները, իսկ եզրակացությունները կոնկրետ են և բխում են փաստական նյութի քննությունից:

Աշխատանքի I և II գլուխներում մանրամասն ներկայացվում են տվյալ քննության տեսական հիմքերը, որոշարկվում ուսումնասիրության ելակետային դրույթներն ու մոտեցումները՝ շեշտադրելով ֆրանսիական ժամանակակից լրագրային խոսույթում եղանակավորման քննության տարբեր հայեցակերպեր: Նախ, ատենախոսը, ժամանակակից լեզվաբանության զարգացման միտումներին համահունչ, քննում է եղանակավորման լեզվափոխակերպական, լեզվաբանական, իմաստագործաբանական, իմաստագործառական և նշանագիտական հայեցակերպերը հայագիտական, ֆրանսագիտական և այլ աղբյուրներում, այնուհետև ներկայացնում ֆրանսիական լրագրության պատմական ավանդույթները, դրա էական տարբերակիչ առանձնահատկությունները: Ատենախոսության տեսական-մեթոդական հիմնավորումը ատենախոսից պահանջել է բազմալեզվյա հարուստ լեզվաբանական գրականության ուսումնասիրություն, այդ թվում՝ մասնագիտական 133 գիրք, հեղինակավոր 10 բառարան, իսկ որպես փաստական նյութ ծառայել են 12 սկզբնաղբյուր, այդ թվում նաև՝ 21 համացանցային կայքեր: Կարելի է նշել, որ աշխատանքի առաջին գլուխը ֆրանսերենի լրագրային խոսույթում եղանակավորման կարգի մի ամփոփ ուսումնասիրություն է, որն ամբողջովին համահունչ է տվյալ ուսումնասիրության նպատակին և առաջադրված խնդիրներին:

3. Առանձնահատուկ դրվատանքի է արժանի աշխատանքի փաստական նյութի համակողմանի քննությունը, որը հիմնվում է ֆրանսիական ամենահեղինակավոր ամսագրերից քաղված առաջնորդող հոդվածների և ռեզիոնալ նշանակության թերթերի տեղեկատվական նպատակ ունեցող հոդվածների վրա: Այս փաստական նյութի համակողմանի ուսումնասիրությունն ապահովում է եզրակացությունների հավաստիությունը: Քննությունը հիմնվում է լայն մեթոդական հենքի վրա՝ ներառելով ինչպես ճանաչողության համընդհանուր գիտական, այնպես էլ լեզվաբանական տարբեր՝ համատեքստային, իմաստաբանական, բաղադրիչային և այլ մեթոդներ:

4. Աշխատանքի կատարման ընթացքում ակնհայտ է Ս. Թադևոսյանի՝ երևույթների էությունը վերլուծելու և խորապես իմաստավորելու կարողությունը, գոյություն ունեցող տեսակետները ստեղծագործաբար զարգացնելու ունակությունները, իսկ կնճռոտ և վիճահարույց որոշ խնդիրների շուրջ ատենախոսը արտահայտում է իր հստակ դիրքորոշումը: Այսպես՝ մանրամասն քննության առնելով

եղանակավորության սահմանման և տարբեր հայեցակերպերի շուրջ արդի լեզվաբանության մեջ առավել հայտնի տեսակետներ և մոտեցումներ՝ առաջին գլխի վեցերորդ ենթագլխում ատենախոսը եզրակացնում է, որ «եթե եղանակավորությունն ինքնին գուտ հասկացական կարգ է», ապա «եղանակավորման ընթացքը տրվում է օբյեկտիվ լեզվաբանական քննության՝ ըստ այդմ հատկորոշվելով որպես լեզվական դրսևորումներ ունեցող իմաստագործառական և իմաստագործաբանական կարգ, համապատասխանաբար բացահայտվելով տեքստի և խոսույթի վերլուծության ընթացքում» (էջ 34): Նմանապես կարևոր է ատենախոսի այն դիրքորոշումը, երբ մեղիատեքստի եղանակավորությունը համարվում է «որպես տեքստակազմիչ գործոն» (էջ 43), ողջ աշխատանքի ընթացքում վերածվելով հիմնաքարային գաղափարի, որտեղ եղանակավորության բովանդակությունն ու շրջանակը որոշվում է խոսքային գործունեության մասնակիցների միջև բազմազան և բազմաբնույթ հարաբերություններով: Առանձնահատուկ ուշադրության է արժանի հորդորական եղանակավորման ենթատեսակների դասակարգումը եզրակացության մեջ, որը բխեցվել է երրորդ գլխի փաստական նյութի վերլուծությունից:

Ըստ արժանվույն գնահատելով աշխատանքը՝ այնուամենայնիվ կցանկանայինք մեր դիտարկումներն ու առաջարկներն արտահայտել աշխատանքում տեղ գտած որոշ վիճելի հարցադրումների ու խնդիրների շուրջ:

1. Թեև ատենախոսը, մեջբերելով Մազիեդին, իրավացիորեն նշում է, որ «լրագրային խոսույթը հաճախ հայտնվում է գաղափարախոսական և քաղաքական խոսույթների խաչմերուկում» (էջ 48), այնուամենայնիվ, աշխատանքի քննության մեկնակետը չորս տիպի՝ ալեթիկ, դեոնթիկ, էպիսթեմիկ և սուբյեկտիվ-գնահատողական եղանակավորությունների միջոցների ուսումնասիրությունն է տեքստի արտակա և ներակա մակարդակներում: Աշխատանքը ավելի կշահեր, եթե ատենախոսը եղանակավորության կարգի քննության մեջ հաշվի առներ նաև հոդվածների բովանդակային ուղղվածությունը՝ հատկապես կարևորելով *գաղափարական եղանակավորությունը* և վերջինիս լեզվական դրևորման առանձնահատկությունները ֆրանսիական մամուլում: Գաղափարական եղանակավորությունը, որպես արժեաբանական (աքսիոլոգիական) եղանակավորության տարատեսակ, դիտարկվում է գնահատողական արժեքների ու հարաբերությունների համակարգ, որը խարսխվում է քաղաքական հայացքների վրա (տե՛ս, օրինակ, Марьянчик В. А. Аксиологическая структура медиаполитического текста (лингвостилистический аспект): автореф. дис. ... д-ра филол. наук. — Архангельск, 2013): Աշխատանքի հետագա զարգացման և կատարելագործման առումով արդիական ենք համարում նաև ազգամշակութային պայմանավորվածություն ունեցող գաղափարական եղանակավորության քննությունը ֆրանսիական մամուլում՝

հայերենի հետ համեմատությամբ:

2. Ատենախոսի՝ էջ 40-41-ում ներկայացված տեքստերի գործառական-ժանրային տիպերի առանձնացումն ունի որոշ վիճելի կողմեր: Այսպես, էջ 40-ում, խոսելով մեդիատեքստի կամ զանգվածային լրատվամիջոցների տեքստերի ժանրային-գործառական տիպերի մասին, ատենախոսը առանձնացնում է «գուտ տեղեկատվական, վերլուծական բնույթի տեքստեր, ինչպես նաև ակնարկներ, գովազդային նյութեր»: Անհասկանալի է, թե ինչու է ատենախոսը տվյալ շարքում առանձնացնում *ակնարկը*, երբ, օրինակ, էջ 41-ում «գեղարվեստական-հրապարակախոսական բնույթի հոդվածները» ներկայացվում են «ակնարկների և էսենների ձևով»: Բացի այդ, տեղեկատվական հոդվածներում ներառված են «զեկույցներ» (էջ 41), որը նույնպես վիճահարույց է և մեկնաբանության կարիք ունի: Ի վերջո, լայն առումով, մեդիատեքստը մեր դինամիկ կյանքի պրագմատիկ զարգացումների համատեքստում պետք է ընկալել որպես դինամիկ կարգ, որն ունի գործառության լայն դաշտ: Տարբեր ուսումնասիրություններում առաջարկվում են տարբեր դասակարգումներ, որոնք չեն սպառում մեդիատեքստի ժանրային ձևերի ողջ բազմազանությունը: Արդի մեդիատեքստի կարևոր առանձնահատկություններից մեկը ժանրային ձևերի փոխադարձ ներթափանցումներն են և դրանց մերձեցումն ու հակադրամիասնությունը, ինչպես նաև՝ նոր ինտեգրացված ժանրերի առաջացումը՝ инфотейнмент, անգլ. infotainment (information և entertainment), эдютейнмент, անգլ. edutainment (անգլ. education և entertainment) և այլն:
3. Փաստական նյութի ներկայացման մեջ չի նշվում, թե խոսքը գրավոր, թե՞ առցանց մամուլից քաղված նյութի մասին է: Որպես քննության նյութ են ներկայացվում նաև ռեզիոնալ նշանակության թերթերի տեղեկատվական նպատակ ունեցող հոդվածները, որտեղ, ի տարբերություն թերթի առաջնորդող հոդվածի, ժանրային պատկանելությունը հստակեցված չէ: Այստեղ նշված չէ նաև քննության նյութ դարձած հոդվածների քանակը և ժամանակային սահմանափակումները:
4. Թեև աշխատանքը շարադրված է հստակ, գրագետ և տրամաբանված և աչքի ընկնում է տերմինային ճշգրտությամբ, այնուամենայնիվ, կան որոշ նկատառումներ: Աշխատանքում առանցքային համարվող ալեթիկ, դեոնթիկ, էպիսթեմիկ եղանակավորությանը վերաբերվող տերմինային ճշգրտումները կատարվում են միայն էջ 22-23-ում, մինչդեռ նախորդ էջերում մի շարք դեպքերում անդրադարձ է կատարվում այդ հասկացություններին:
«Հաղորդակցական մտադրություն» (էջ 61) տերմինային կապակցության փոխարեն առավել ընդունված է «հաղորդակցական դիտավորություն» արտահայտությունը (տե՛ս Ա. Նազարյան, «Լեզվաբանական տերմինների բառարան, էջ 258), որն, ի դեպ, օգտագործում է նաև ատենախոսը (տե՛ս էջ 109), «ռեզիոնալ» բառի փոխարեն կարելի է գործածել «տեղական,

տարածաշրջանային» բառերը, «կոմերցիոն բաղադրիչ» արտահայտության փոխարեն՝ «առևտրային բաղադրիչ» (էջ 51), կան տեխնիկական մի քանի վրիպակներ՝ *ռնեցող* (էջ 23), *դրսևորումները* (էջ 24), *ոսումնասիրություն* (էջ 45), կան որոշ վիճելի ձևակերպումներ՝ օրինակ՝ «եղանակավորման միջոցների քննությունը պետք է ուսումնասիրի» (էջ 29): Զարմանալիորեն էջ 22-ում սպրդել է «ասպեկտ» եզրույթը, թեև աշխատանքում հաճախ գործածվում է դրա հայերեն համարժեքը՝ *հայեցակերպ*:

Վերը նշված դիտողությունները, ինչպես ասվեց, ունեն մասնակի բնույթ, երբեմն էլ բանավիճային են և ամենևին էլ չեն ստվերում տվյալ աշխատանքի գիտական արժեքը: Ս. Թադևոսյանի ատենախոսությունը արդիական, արժեքավոր և ամփոփ հետազոտություն է, որն ամբողջովին համահունչ է արդի լեզվաբանության զարգացման միտումներին: Աշխատանքի վերջում ներկայացված եզրակացությունները կոնկրետ են, հիմնավորված և բխում են փաստացի բազմաբնույթ նյութի քննությունից: Աշխատանքը լիովին բավարարում է թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջները: Ատենախոսության հիմնադրույթները արտացոլված են հեղինակի հրապարակումներում և սեղմագրում:

Վերոհիշյալը հիմք է տալիս մեզ միջնորդելու ԵՊՀ գիտական աստիճաններ շնորհող 009 «Օտար լեզուներ» մասնագիտական խորհրդի առջև՝ Սյուզաննա Թադևոսյանին շնորհելու բանասիրական գիտությունների թեկնածուի հայցվող աստիճանը՝ Ժ. 02. 07. «Ռոմանագերմանական լեզուներ» մասնագիտությամբ:

Պաշտոնական ընդդիմախոս՝

ԵՊՀ ռոմանական բանասիրության ամբիոնի վարիչ,

բ.գ.դ., պրոֆեսոր

Համիկ Բաղդասարյան

Հաստատում եմ

բ.գ.դ. պրոֆեսոր Հ. Բաղդասարյանի ստորագրությունը

ԵՊՀ գիտական քարտուղար

բ.գ.թ., դոցենտ



Մերի Հովհաննիսյան